

ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

Անթիլիաս, 22 Դեկտ. 1977

Ամենապատիւ

Տ. Եղիշէ Ս. Արքեպիսկոպոս

Պատրիարք Հայոց Երուսաղէմի

Ե Ր Ո Ն Ս Ա Ղ Է Մ

Սրբազան Եղբայր,

Յառաջիկայ Ամանորի եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով Ձերդ սիրելի Սրբազնութեան կը յայտնենք Մեր արտակից մաղթանքները քաջառողջ կեանքի, երջանկալից գահակալութեան եւ բեղուն գործունէութեան:

Ի խորոց սրտի կ'աղօթենք առ մարմնացեալն Փրկիչ որ իր խաղաղութեան լոյսը առատօրէն հեղու ամենայն աշխարհի վրայ, բոլոր ազգերու եւ մարդերու հոգիներուն մէջ, եւ մեր Հայ Ժողովուրդին ու Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ պարգեւէ պայծառութեան, բարգաւաճման նոր շրջան մը սիրոյ, միութեան եւ եղբայրութեան բարիքներով առլցուն:

Աղօթակից

Մնամք եղբայրական սիրոյ ողջունիւ,

Գ Ա Ր Ե Գ Ի Ն Բ

Խ Ո Ր Է Ն Ա

ԱԹՈՌԱԿԻՑ-ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ